armavir@mta.gov.am

ՀՀ Արմավիրի մարզի մարզպետ Աշոտ Ղահրամանյանին

լրագրող Լիլիթ Գրիգորյանից

( Արմավիրի մարզ, գ. Փշատավան)

Հարգելի պրն. Ղահրամանյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին:

1. Փշատավան- Արգավանդ հանրապետական նշանակության միջհամայնքային ճանապարհը կառուցելը այս տարվա ծրագրերի մեջ մտնո՞ւմ է: Եթե այո, ապա ի՞նչ ժամանակահատվածում կիրականացվի: Եթե ոչ, ապա ի՞նչ ծրագրեր կան այդ ուղղությամբ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝
Լիլիթ Գրիգորյան

10.04.2015

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 100/4231-15
10 — 04 2015 թ.